

Միջոցառմանը դեռ մեկ ժամից էլ ավելի կա, բայց դահլիճի դռների մոտ հանդիսատեսն արդեն սպասում է: Ուսանողներ, աշակերտներ, տարեց մարդիկ, զրոյներ, հրատարակիչներ, աշխատակիցներ, ընթերցողներ...Մաեստրոին են սպասում:

«Օ, ինչ հրաշալի մարդկանց հետ եմ այսօր հանդիպելու», - դեռ մուտքի մոտից ձայն է տալիս 80-ամյա երիտասարդը՝ Տիգրան Մանսուրյանը: Յուրաքանչյուրի համար մի լավ խոսք, մի ջերմ ժպիտ ունի պահած՝ Մեծերը, երեւի, միայն այդպես են ժպտում:



Լուսանկարներ, հարցազրույցներ...բայց Մաեստրոն չի մոռանում. Միջոցառումը 15.00 է նախատեսված, հանդիսատեսին երկար սպասեցնել չի կարելի: «Մեր զրույցը դահլիճում կշարունակենք:», -խոստանում է հանդիսատեսին ու դիմում միջոցառման հատուկ հյուրերին՝ միջազգային մրցույթների դափնեկիր Տաթևիկ Մովսիսյանին ու դաշնակահար Լուսինե Հակոբյանին, -«Այսօր մենք-մերոնցով անկեղծ, ջերմ զրույց ենք ունենալու, դուք էլ ձեր կատարումներով վստահաբար ավելի կջերմացնեք մեր օրը, չ'է, բալիկ ջան»:

Երգի վերածված բանաստեղծությունների ու բանաստեղծությունից ծնված երգերի մասին զրույց- քննարկումը ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Մհեր Նավոյանն է վարում:

«Ես վաղուց էի ուզում ձեզ հետ քննարկել հայկական մշակույթում երաժշտական հարմոնիայի և պոեզիայի թեման: Երբ Ազգային գրադարանից հրավեր ստացա, որոշեցի՞նք հանդիպման հենց այս ձևաչափը ընտրել եւ ահա մենք մի քանի ժամով այստեղ ենք: Կամ մեկ ժամով, ուղղակի, եթե ես սկսեմ խոսել, ապա, վախենամ, կանգ չեմ առնի», - ժպտում է մաեստրո Մանսուրյանը:

Մեկ կամ քանի ժամը աննկատ է անցնում: Երգի ու պոեզիայի մասին թեմաները հաջորդում, շարունակում, լրացնում են իրար:

«Երգը ստեղծելը կարծես թե հեշտ բան է, կա բանաստեղծական տեքստ, դրա վրա կոմպոզիտորը ստեղծում է երաժշտություն: Մակայն երբ խոսում ենք մշակույթի շատ արժեքավոր, նստվածքային շերտերի մասին, չենք կարող չնշել, որ ժողովուրդ ենք, որի ժառանգության մեջ գոնե մինչև 18-19 դարը չի եղել պրոֆեսիոնալ մակարդակի առանձին երաժշտություն, առանձին բանաստեղծություն, եղել է երաժշտաբանաստեղծական փոխկապակցված, սերտաճած արվեստ: Այս ժառանգության կրողն է Տիգրան Մանսուրյանը», - ընդգծում է Մհեր Նավոյանը: Մաեստրոն, իր խոսքով, «մի հետաքրքիր փորձառության» մասին էլ է պատմում, որ ունեցել «Ռեքվիլիեմը» գրելիս.



«Լատիներենը հայ երաժշտությամբ որ երգում ես, մեկ էլ տեսնում ես՝ կորցնում ես ռեալության զգացումը լեզվի հետ կապված՝ այդ ինչ լեզվով է՝ հայերեն՝, թե՛ լատիներեն: Տեսնում ես, որ ելևէջը, որը հայերենի վրա է գոյացել, երբ դնում ես մի ուրիշ լեզվի հետ, այդ մեղեդին հիշում է իր ծագումը և պարտադրում է իր ծագումն այդ նոր լեզվին, որին դու միացրել ես: Դրանից է, որ այդ լատիներենը մի տեսակ հայերեն էր դառնում: Հիմա գիտեմ մեղեդին, երբ որ հիմքում հայերեն բառ է ունեցել,

բայց ճիշտ, մաքուր երգված, այդ մեղեդին եթե բառերը հանես, միևնույնն է՝ հիշում է իր մեջ լեզվի կյանքը»,- ընդգծում է Տիգրան Մանսուրյանը:

Հետաքրքիր գրույցին համերգային ծրագիրն է հաջորդում: Ավետիք Իսահակյանի եւ Վահան Տերյանի բանաստեղծական տողերի հիման վրա Տիգրան Մանսուրյանի ստեղծած երգերը միջազգային մրցույթների դափնեկիր Տաթև Մովսիսյանը եւ դաշնակահար Լուսինե Հակոբյանն են կատարում:

Միջոցառման ավարտին Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Հրաչյա Մարիբեկյանը շնորհավորում է Մաեստրոյին ու նրան հանձնում գրադարանի խորհրդանիշ «Ուրբաթագրքի» ֆաբսիմիլե օրինակը:

Միջոցառման ավարտից հետո էլ երկար ժամանակ մաեստրոն չէր կարողանում դուրս գալ դահլիճից: Հանդիսատեսը սիրված արվեստագետին հեշտությամբ հեռանալ չէր կարող թույլ տալ. Լուսանկարներ, ժպիտներ, հարցեր, բարեմաղթանքներ...

-Հոգնեցի՞ք Մաեստրո,- հարցնում ենք:

-Սա իմ կյանքի անբաժան մասն է եղել տարիներ շարունակ: Հանդիսատեսն ինձ է շատ սիրում, ես էլ իրեն,- պատասխանում է ու մոտենում ցուցափեղկերին, որտեղ արվեստագետի բնորոշմամբ, իր անցյալն է արտացոլված:



Գրքեր, տարբեր տարիներին գրված հոդվածներ, Տիգրան Մանսուրյան արվեստագետի մասին տպագիր նյութեր...

«Անցյալս վերադարձրեցիք»,- ժպտում է եւ գրադարանին հիշատակ թողնում իր ինքնագրերով գրքերը:

«Գրքի եւ Հայոց գրի այս շտեմարանին մաղթում եմ բեղուն կյանք, ընթերցողների մեծ բանակ»

Տիգրան Մանսուրյան

12.12.2019 Երեւան

